ԵԴ2/0753/02/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 փետրվարի 2024թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Բիգ Լայֆ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց

28.01.2024 թվականին «Մ. Բուատ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության* ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/1ԱԼ ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 17.01.2024 թվականի թիվ 2 արձանագրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին:

Հայցադիմումը դատավորին է հանձնվել 31.01.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մ. Բուատ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականին մարտի 15-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**